ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՔԱՂՎԱԾՔ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ
« ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ՝
ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 130-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍ N 5)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով«Քաղաքապետերի դաշնագիրը՝հանուն կլիմայի և էներգիայի» (այսուհետ՝Դաշնագիր) նախաձեռնությանը միանալու մասին հայտարարությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Եվրոպական Հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիրը՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալուն:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝

առնվազն երկու տարվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» տարածաշրջանային ծրագրի և այլ գործընկերների աջակցությամբ, Դաշնագրի շրջանակներում մշակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիր (Sustainable Energy and Climate Action Plan), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողություններ և միջոցառումներ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ: Ստորագրություն՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ԹԱՆՈՒՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝